

Հարց Ի՞նչ միջոցառումներ են ձեռնարկվել Հանձնաժողովի կողմից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում հեռուստատեսության և ռադիոյի բնագավառի զարգացմանը նպաստելու համար:

Պատասխան Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման գործընթացը պարզեցնելու նպատակով 2010 թվականին Հանձնաժողովի հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի կարգի մեջ սահմանվել են մրցութային առաջարկների ընդունման և մրցույթի հաղթողի ճանաչման համար նոր ողջամիտ ժամկետներ, ինչը ստեղծել է առավել նպաստավոր պայմաններ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հեռուստատեսության և ռադիոյի բնագավառի զարգացման համար: